թյունների հետ, բայց ավելի երկարատև և իրենց կազմակերպության էությամբ արդեն չունեին այն մագիկ նշանակությունը, որը պահպանվել էր հայ բնակչության մեջ՝ ծագելով հայ ժողովրդի կազմավորման շատ վաղեմի ժամանակներից, երբ ոչ խան, ոչ էլ փաշա է եղել։

Անպայման իր կարգադրություններին լիակատար հպատակություն պահանջող լիազոր իրավասությամբ հանդես եկող երիտասարդ իշխանավորը թվում է, թե իր ելույթի մագիկ ներգործությամբ նպատակ ուներ արծարծել, արագացնել և դյուրացնել բնության մեջ նույնպիսի լիազոր իշխանավորի առաջ գալը, իսկ այս խաղերից հետո սարքվող քեֆը երիտասարդների կողմից բերվող մատաղն էր, որի նպատակն էր ոչ միայն կշտացնել, այլև խրախուսել հարություն առնող աստվածությունը, նրա ուրախ և բարի վերածնությունը[33]։ Խանին հատկացվող բացարձակ լիազորությունը թելադրում է մեզ այս խաղը համեմատել այն մագիկ միջոցառումների հետ, որոնց ուսումնասիրությանը նվիրված է Ջ. Ֆրէզերի հռչակավոր աշխատությունը՝ «Ոսկե ճյուղը»—«The Golden Bough»[34]։ Նա ապացուցեց բազմաթիվ օրինակներով, որ նախնական մտածությանը հատուկ է բնության ստեղծագործական ուժը արծարծելու և միշտ թարմ պահելու համար, թույլ չտալ, որ քուրմը, առաջնորդը, թագավորը, նա՝ ումը վերագրվում է անմիջական կապակցություն բնության բեղմնավորությունն արթնացնելու, ծավալելու և անսպառ պահելու հետ—ծերանա, հիվանդանա, մեռնի և դրանով նույնը առաջացնի բնության մեջ[35]։ Այդ նպատակով հիվանդացող, ծերացող կամ թուլության նշաններ ցույց տվող այդպիսի մեկը հեռացվում էր, մեռցվում էր և փոխարինվում էր առողջով, երիտասարդով, ուժեղով։ Դրանով ապահովվում էր բնության առողջությունը և երիտասարդական թարմությունը։ Բարեկենդանական խանին հատկացվող բացարձակ իշխանությունը գրգռելու էր արթնացող բնության նույնպիսի իշխանություն (մի գործողության մագիկ զորությամբ նման գործողություն առաջացնելու ուժ)։ Այն, ինչ որ նախնական հասարակության մեջ լուրջ մագիկ ծիսակատարություն էր, ավելի ուշ ժամանակներում, այլ մտայնության գերիշխանության հետ վեր է ածվել սոսկ թատերախաղի, հասարակական պարզ ժամանցի։ Թատերախաղի գործողության բովանդակությունը ստանում էր և որոշ սոցիալական իմաստավորում, ինչպես և ազգային-ազատագրական պայքարի արտացոլում։ Որ հնում այդ խանը մեռցվում էր, ինչպես Ջ. Ֆրէզերի նկարագրած դեպքերում, պետք է շատ հավանական համարել, նկատի ունենալով մի այլ նման բարեկենդանական խաղը, որը նույն մագիկ նպատակն ուներ, բայց վաղուց մոռացված էր Զանգեզուրի գյուղերից մեծ մասում և պահպանվում էր իր էական մանրամասնություններով Արծվանիկում։ Այդ թատերախաղը կոչվում էր Հարսի խաղ[36]։ Այստեղ դերակատարները ոչ թե երիտասարդներ ու պատանիներ էին, այլ ավելի փոքրերը։ Մի տղա հագնում էր հնարած զգեստներ, գլխին անպատճառ պիտի լիներ տղամարդու գդակ, մյուս տղան էլ զարդարվում էր ավելի որոշակի կանացի զգեստով, որպես

---

[33] Այս բացատրությունը տալով բարեկենդանական խան խաղերին, խնդրի ավելի բազմակողմանի լուսաբանությունը մտադիր եմ դարձնել հատուկ ուսումնասիրության նյութ։ (Հեղինակի մահը թույլ չտվեց նրան իրագործելու այդ մտադրությունը, ծան. խմբ.)։

[34] *Фрэзер Дж.*, Золотая ветвь. ռուսերեն, 1928 и 1931.

[35] Անշուշտ այս մտայնության հետ անմիջական կապ ունի և քրիստոնեական ավանդությունը՝ Քրիստոսի չարչարանքների, մահվան և նոր ուժով հարության մասին։

[36] СМОМПК, вып. XXV, отд. II, էջ 48։